

Հաշվետվություն  
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի  
ներքին աուդիտի բաժնի 2018թ

---

Ներքին աուդիտի բաժինը ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները, ինչպես նաև ՀՀ Արագածոտնի մարզպետի կարգադրությունները 2018թ ընթացքում ներքին աուդիտի բաժինը ներքին աուդիտ է իրականացրել 41 միավորներում ներառելով 2015, 2016, 2017 թվականները:

Ներքին աուդիտի բաժինը համակարգի գնահատման աուդիտ է իրականացրել «Պետական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ներում, բժշկական կենտրոն ՓԲԸ-ներում և առողջության կենտրոն ՊՈԱԿ-ում:

Աուդիտորները աուդիտորական ուսումնասիրությունների ընթացքում հայտանաբերել են բազմաթիվ թերություններ, որի վերաբերյալ կազմվել են արձանագրություններ: Արձանագրություններում տեղ գտած բացահայտումների ու եզրակացությունների հիման վրա կազմվել են նախնական և վերջնական հաշվետվություններ:

վերջնական հաշվետվությունները քննարկվել են ներքին աուդիտի կոմիտեի կողմից գումարված նիստերում և կազմվել են արձանագրություններ, այնուհետև կազմվել են նաև գործողության ծրագրեր:

Կոմիտեի ղեկավարի կողմից հանձնարարվել է ՀՀ պետական բյուջե վերականգնել 5377320 ՀՀ դրամ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժին